## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասը, ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշումը, ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 22-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, 6 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ.

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ՈՐՈՇԵՑ

1. ----ի դիմումը բավարարել մասնակի՝

1) հաստատված համարել «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ավագ բուժաշխատող Քրիստինե Սարգսյանի կողմից ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնի խախտման փաստը և առաջարկել ՀՀ առողջապահության նախարարին ավագ բուժաշխատող Քրիստինե Սարգսյանին ՀՀ աշխատանքային օրենսդրության համաձայն նկատողություն տալու առաջարկությամբ դիմել նրա գործատուին՝ «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի իրավասու անձին.

2) մերժել դիմումը բուժաշխատողների մասնագիտական էթիկայի կանոնների խախտման բացակայության հիմքով՝ ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի, 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 4-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների մասով.

3) մերժել դիմումը ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջի խախտման մասով (գաղտնի ձայնագրությունների կատարում) քրեական պատասխանատվություն նախատեսող առերևույթ արարք հանդիսանալու հիմքով: